ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
«Վանաձորի Գրիբոյեդովի անվան
№ 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
LORI MARZ
"VANADZOR after GRIBOEDOV
#11 HIGH SCHOOL" GNO

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ
ГНКО «г. Ванадзор СТАРШАЯ ШКОЛА
№11 ИМ. ГРИБОЕДОВА»

Ազատամարտիկների պուրակ 1

e-mail: vanadzor11@schools.am

☏ 2-09-37

"24" հուլիսի 2013թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Գրիբոյեդովի անվան №11 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր (նախարարության կողմից մշակված հարցաշարով):

Մրցույթին մասնակցելու համար անձը պետք է ունենա ավագ դասարաններում աշխատելու առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ և հանձնաժողովին ներկայացնի՝

1) հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն Թափուր տեղի անվանումը, որին հավակնում է (Ձև 1),
2) փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման մասին,
3) անձնագրի պատճենը,
4) ինքնակենսագրություն (Ձև 4),
5) Թափուր տեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6) մեկ լուսանկար՝ 3x4,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են հուլիսի 24-ից մինչև օգոստոսի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 19-ին, ժամը 11:00-ին, Վանաձորի թիվ 11 ավագ դպրոցում, հասցեն՝ Ազատամարտիկների պուրակ 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0322) 2-09-37, (0322)2-21-30:

Դպրոցի տնօրեն՝ Ն.Ա.Սահակյան